

ԱՐՓԱ – ՍԵՎԱՆ

Բաց Բաժնետիրական Ընկերություն



2022թ.

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Ստորև ներկայացվում են «Արփա-Սևան» բաց բաժնետիրական ընկերության Կորպորատիվ Կառավարման հայտարարագրի պատմողական նկարագրությունը (Հավելված-թիվ 1) և բուն հայտարարագիրը - հիմնված «Հետևիր կամ բացատրիր» սկզբունքի վրա (Հավելված-թիվ 2):

Սույն ԿԿ Հայտարարագրով ներկայացված տեղեկատվությունը կազմված է 2022թ. (հաշվետու տարվա) համար և ներառված է Ընկերության տարեկան հաշվետվության մեջ:

ԵՐԵՎԱՆ 2023

**Հավելված 1. Կորպորատիվ Կառավարման Հայտարարագիր-
Նկարագրական մաս**

Ընկերության անվանումը՝ «Արփա-Սևան» բաց բաժնետիրական ընկերություն
Հասցե՝ Հայաստան, 0012, Երևան, Վ. Վաղարշյան 20

հեռ. 012 21 11 11

Էլ-Փոստ: info@arpa-sevan.am

Ինտերնետային կայքը՝ www.arpa-sevan.am

1. Խորհրդի նախագահի ներածական խոսքը

Ելնելով Ընկերության տնտեսական գործունեության արդյունավետության և աճի բարելավման, ներդրողների վստահության ամրապնդման, ինչպես նաև արդյունավետ ու թափանցիկ վերահսկողության իրականացման անհրաժեշտությունից 2011թ.-ից Ընկերությունը հետևում է ՀՀ Կառավարության 30.12.2010թ. N 1769-Ա որոշմամբ հավանության արժանացած Կորպորատիվ կառավարման կանոնագրի սկզբունքներին: «ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերության) գործարար էթիկան դիտարկում է որպես գործարար հարաբերություններում բարոյական արժեքների կիրառման հանձնառության ստանձնում: Ընկերությունը ձգտում է, որ այն իր գործնական արտահայտությունը գտնի ոչ միայն իր որոշումներում և գործողություններում, այլև նրանում, թե այդ որոշումների և գործողությունների միջոցով ինչպիսի մշակույթ է հաղորդում իր շահառուներին:

Կորպորատիվ կառավարման արդյունավետության բարելավման նպատակով 2020թ-ին Ընկերությունում ներդրվել են՝

1. ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՓԲԸ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ N 001/Q-003-0008-2020

Բնակելի, հասարակական և արտադրական, տրանսպորտային, հիդրոտեխնիկական, էներգետիկ, կապի ոլորտներում շինարարության, պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների և պայթեցման աշխատանքների նկատմամբ ներդրված որակի կառավարման համակարգը համապատասխանում է

ԻՍՕ 9001:2015

«Որակի կառավարման համակարգեր. Պահանջներ» միջազգային ստանդարտի պահանջներին
Տրված է 08.12.2020թ. ուժի մեջ է մինչև 08.12.2023թ.

2. ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՓԲԸ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ N 001/F-003-0001-2020

Բնակելի, հասարակական և արտադրական, տրանսպորտային, հիդրոտեխնիկական, էներգետիկ, կապի ոլորտներում շինարարության, պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների և պայթեցման աշխատանքների նկատմամբ ներդրված որակի կառավարման համակարգը համապատասխանում է

ԻՍՕ 14001:2015

«Որակի կառավարման համակարգեր. Պահանջներ» միջազգային ստանդարտի պահանջներին
Տրված է 08.12.2020թ. ուժի մեջ է մինչև 08.12.2023թ.

3. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ


Սերտիֆիկատի գրանցման համար No. 9155341

Շինարարական, արտադրական, շահագործման, հիդրո-տեխնիկական կառույցներում հորատման և պայթեցման աշխատանքների, էներգետիկ համակարգերի և թունելների նկատմամբ ներդրված որակի կառավարման համակարգը համապատասխանում է

ԻՍՕ 45001:2018

«Որակի կառավարման համակարգեր» պահանջներին
Տրված է 20.11.2020թ. ուժի մեջ է մինչև 19.11.2023թ.

2. Կորպորատիվ կառուցվածքը



Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է: Կառավարման մյուս մարմիններն են՝ Խորհուրդը, Գլխավոր տնօրենը: Ընկերության ֆինանսատնտեսական գործնեության վերահսկումն իրականացնում է Վերստուգող հանձնաժողովը:

Ընկերության խորհրդը կազմված է 6 (վեց), Վերստուգող հանձնաժողովը՝ 3 (երեք) - անդամներից: Ընկերության կառավարման և վերահսկման մարմինների իրավասություններն ու պարտականությունները սահմանված են Ընկերության կանոնադրությամբ և համապատասխան կանոնակարգերով:

Ընկերությունը խորհրդին կից ձևավորվել է աուդիտի հանձնաժողով և ունի ներքին աուդիտոր:

Ընկերության նշանակալից բաժնետերերն են՝

1. Հակոբյան Պարույր Հակոբի - տիրապետում է 11 417 հատ բաժնետոմսի, որը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 55.8334%-ը:

2. Նավասարդյան Կարինե Արշավիրի - տիրապետում է 2673 հատ բաժնետոմսի, որը կազմում է Ընկերության կանոնադրական կապիտալի 13.0696 % -ը:

Ընկերությունն այլ խմբի անդամ չէ:

15.06.2004թ. Ընկերությունը հիմնադրել է 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ կանոնադրական կապիտալ ունեցող «Արփա-Սևան նախագիծ» փակ բաժնետիրական դուստր ընկերությունը:

Հասցե՝ Հայաստան, 0012, Երևան, Վ. Վաղարշյան 20

Ընկերության կառավարման մարմնի անդամները Ընկերության կողմից հիմնադրված «Արփա-Սևան նախագիծ» ՓԲԸ կառավարման մարմիններում ներգրավված չեն:

23.08.2010թ. Ընկերությունը հիմնադրել է «Արփա-Սևան» Բարեգործական Հիմնադրամը:

Հասցե՝ Հայաստան, 0012, Երևան, Վ. Վաղարշյան 20
Ընկերության գլխավոր տնօրեն՝ Պարույր Հակոբյանը «Արփա-Սևան» Բարեգործական Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է, խորհրդի անդամ՝ Զորիկ Վարդանյանը հոգաբարձուների խորհրդի անդամն է:

3. Բաժնետերերի ընդհանուր ժողովները

3.1. 2022թ Ընկերությունը գումարել է մեկ ընդհանուր ժողով՝ տարեկան ժողով: Ժողովը գումարվել է Ընկերության վարչության գրասենյակում:

Հասցե՝ Հայաստան, 0012, Երևան, Վ. Վաղարշյան 20

3.2. Բաժնետերերի տարեկան ժողովը գումարվել է 2022թ. հունիսի 8-ին:

3.2.1 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի մասին ծանուցումը և օրակարգը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2022թ. մայիսի 11-ի համարում, բաժնետերերի ընդհանուր ժողովից 28 օր առաջ:

3.2.2 Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է 2022թ. հունիսի 3-ի դրությամբ:

3.2.3 Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկվել են՝

- Ընկերության 2021թ. տարեկան հաշվետվության հաստատումը.
- Ֆինանսական գործունեության վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի և աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը.
- Շահույթի բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների չափի և վճարման մասին որոշման ընդունումը.
- Խորհրդի անդամների ընտրություն:

Համաձայն Ընկերության կանոնադրության 50 և 51 կետերի սահմանվել է ընդհանուր ժողովում քննարկվող հարցերին վերաբերվող բաժնետերերին տրամադրվող նյութերի և տեղեկությունների հետևյալ կարգը և ցանկը՝

Ընկերության բաժնետերերը, ինչպես նաև Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունեցող անձինք, ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցվում են՝ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հայտարարություն հրապարակելու միջոցով և www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Ընկերությունը պարտավոր է սույն կետով սահմանված կարգով ժողովի գումարման մասին իր բաժնետերերին ծանուցել ժողովի գումարման օրվանից 21 օր շուտ, որով բաժնետերերին տեղեկացվում է ժողովի գումարման վայրը, օրը, ժամը, ժողովում ընդգրկված հարցերը:

Ընկերության ժողովի գումարման մասին գրավոր ծանուցվում է վերստուգող հանձնաժողովը, ինչպես նաև Ընկերության աուդիտն իրականացնող անձը:

Տեղեկությունները տեղադրել Ընկերության www.arpa-sevan.am ինտերնետային կայքում և տրամադրել բաժնետերերին սկսած 2022թ. մայիսի 8-ից մինչև հունիսի 6-ը:
Հասցե՝ Հայաստան, 0012, Երևան, Վ. Վաղարշյան 20

Տրամադրվող նյութերի ցանկը՝

- Ընկերության 2021թ. տարեկան հաշվետվությունը.

- Ընկերության տարեկան ֆինանսական գործունեության արդյունքների վերաբերյալ ընկերության վերստուգող հանձնաժողովի և աուդիտի եզրակացությունը.
- Ընկերության 2021թ. կորպորատիվ կառավարման հայտարարագիրը.
- Ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացվող խորհրդի թեկնածուների կազմը և նրանց համառոտ կենսագրությունը.
- Քվեարկության դրվելիք հարցերի վերաբերյալ որոշումների նախագծերը.
- ՀՀ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ ու նյութեր:

3.3. Համաձայն Ընկերության կանոնադրության, բաժնետերը ընդհանուր ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող էր իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով:

Լիազորված ներկայացուցչի նշանակման ընթացակարգը սահմանված է Ընկերության կանոնադրության 57 կետով, համաձայն որի Բաժնետիրոջ փոխարեն լիազոր ներկայացուցչի մասնակցությունն իրականացվում է բաժնետիրոջ կողմից ներկայացուցչին տրված, նոտարական կարգով հաստատված լիազորագրով, որով ամրագրվում է բաժնետիրոջ կողմից ներկայացուցչին փոխանցված իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև դրանց իրականացման ժամկետները:

Ընկերությունը լիազորված ներկայացուցչի համար մշակված լիազորագրերի ձևեր չունի:

3.4. Քվեարկությունը ընդհանուր ժողովում իրականացվում է «Ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով, բացառությամբ խորհրդի անդամների ընտրության և օրենքով նախատեսված այլ դեպքերի, երբ կիրառվում է գումարային (կումուլյատիվ) քվեարկության սկզբունքը:

Բաժնետերերի ընդհանուր ժողովում քվեարկությունները կատարվում են քվեաթերթիկների միջոցով, որի ձևը և բովանդակությունը հաստատվում է Ընկերության խորհրդի որոշմամբ:

3.5. Տարեկան և արտահերթ ժողովների օրակարգերը, նիստերի արձանագրությունները հասանելի են Ընկերության www.arpa-sevan.am ինտերնետային կայքի՝ ներդրողի համար բաժնում:

4. Խորհրդի հանձնաժողովները

4.1. Խորհրդի գործառույթները

Կանոնագրքի 8-րդ հոդվածը և Ընկերության կանոնադրության 62-րդ կետը սահմանում են Ընկերության խորհրդի բացառիկ և պատվիրակված իրավասությունները, որոնք հասանելի են www.arpa-sevan.am ինտերնետային կայքում:

4.2. Խորհրդի կազմը

8 հունիսի 2022թ. կայացած ընդհանուր ժողովում ընտրվել է Ընկերության խորհրդի նոր կազմը, որը բաղկացած է 6 անդամից, որոնցից 4-ը ոչ գործադիր մարմնի անդամներ են, այդ թվում երկուսը «անկախ» անդամներ են:

Ընկերության կանոնադրության 64-րդ կետով սահմանված է, որ խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդը պետք է լինի անկախ:

Խորհրդի կազմի վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են ներքոհիշյալ աղյուսակներում՝

h/h	Պաշտոնը, Ազգանուն անուն հայրանուն	Գործադիր	Ոչ գործադիր	Անկախ	Խորհրդի անդամ է սկսած
	Նախագահ՝				
1.	Հակոբյան Ռաֆայել Արմենի		✓		16.06.2017թ
	Անդամներ՝				
2.	Հակոբյան Պարույր Հակոբի	✓			23.06.2006թ
3.	Նավասարդյան Կարինե Արշավիրի		✓		28.06.2003թ
4.	Վարդանյան Զորիկ Հովհաննեսի	✓			18.02.1998թ.
5.	Պողոսյան Գոռ Միերի			✓	19.06.2019թ.
6.	Առաքելյան Մարտին Հրաչյայի			✓	08.06.2022թ.

Խորհրդի անդամների համառոտ կենսագրությունները և ԿԿ Կանոնագրի պահանջներով նախատեսված տեղեկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակներում:

1. Հակոբյան Ռաֆայել Արմենի

Ծննդյան ամիս, ամսաթիվ	05.08.1989թ.
Մասնագիտություն	Պետական կառավարում, Պետական և տնտեսական քաղաքականության վերլուծաբան, Պետական բյուջետավորում և ֆինանսական կառավարում
Հիմնական պաշտոն	Խորհրդի նախագահ
Քաղաքացիություն	Հասստանի Հանրապետություն
Այլ ընկերություններում ունեցած պաշտոններ, որոնք առնչվում են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ	«Նուուլոջիք» և «Ա-Ս փաուեր» ՍՊԸ տնօրեն
Ընկերությունում բաժնետոմսերի ուղղակի տիրապետում	—
Փոխկապակցված ընկերություններում բաժնետոմսերի (բաժնեմասերի) ուղղակի տիրապետումը	«Նուուլոջիք» ՍՊԸ - (100%)

2. Հակոբյան Պարույր Հակոբի

Ծննդյան ամիս, ամսաթիվ	29.09.1985թ.
Մասնագիտություն	Ֆինանսիստ, կառավարիչ
Հիմնական պաշտոն	Գլխավոր Տնօրեն, խորհրդի անդամ
Քաղաքացիություն	Հայաստանի Հանրապետություն
Այլ ընկերություններում ունեցած պաշտոններ, որոնք առնչվում են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ	«Մեղմ զեփյուտ» և «Ջրասահք» ՍՊԸ տնօրեն, «Բազենք» ՓԲԸ ֆին. բաժնի պետ, «Արփա-Սևան» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ
Ընկերությունում բաժնետոմսերի ուղղակի տիրապետում	11417 հատ (55.8233%)
Փոխկապակցված ընկերություններում բաժնետոմսերի (բաժնեմասերի) ուղղակի տիրապետումը	«Մեղմ զեփյուտ» ՍՊԸ - 50հատ (100%), «Ջրասահք» ՍՊԸ - (50%), «Սի-Լար» ՍՊԸ - (50%) «Ա-Ս ինվեսթմենթս» ՍՊԸ - (100%)

3. Նավասարդյան Կարինե Արշավիրի

Ծննդյան ամիս, ամսաթիվ	10.01.1959թ.
Մասնագիտություն	Ճարտարագետ, ջերմոտեխնիկ
Հիմնական պաշտոն	Խորհրդի և աուդիտի հանձնաժողովի անդամ
Քաղաքացիություն	Հաստատանի Հանրապետություն
Այլ ընկերություններում ունեցած պաշտոններ, որոնք առնչվում են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ	—
Ընկերությունում բաժնետոմսերի ուղղակի տիրապետում	2673 հատ (13.0696 %)
Փոխկապակցված ընկերություններում բաժնետոմսերի (բաժնեմասերի) ուղղակի տիրապետումը	

4.Վարդանյան Զորիկ Հովհաննեսի

Ծննդյան ամիս, ամսաթիվ	02.02.1951թ.
Մասնագիտություն	Լեռնային ճարտարագետ
Հիմնական պաշտոն	Տնտեսագիտական բաժնի ղեկավար, խորհրդի անդամ
Քաղաքացիություն	Հայաստանի Հանրապետություն
Այլ ընկերություններում ունեցած պաշտոններ, որոնք առնչվում են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ	—
Ընկերությունում բաժնետոմսերի ուղղակի տիրապետում	34 հատ (0.1662 %)
Փոխկապակցված ընկերություններում բաժնետոմսերի (բաժնեմասերի) ուղղակի տիրապետումը	—

5.Պողոսյան Գոռ Միերի

Ծննդյան ամիս, ամսաթիվ	02.01.1989թ.
Մասնագիտություն	Մաթեմատիկոս, մանկավարժ
Հիմնական պաշտոն	Խորհրդի աուդիտի հանձնաժողովի նախագահ
Քաղաքացիություն	Հաստատանի Հանրապետություն
Այլ ընկերություններում ունեցած պաշտոններ, որոնք առնչվում են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ	—
Ընկերությունում բաժնետոմսերի ուղղակի տիրապետում	—
Փոխկապակցված ընկերություններում բաժնետոմսերի (բաժնեմասերի) ուղղակի տիրապետումը	«Այոթեք» ՍՊԸ - (33%)

6. Առաքելյան Մարտին Հրաչյայի

Ծննդյան ամիս, ամսաթիվ	01.08.1981թ.
Մասնագիտություն	Շիֆլիդի համալսարան՝ բիզնեսի կառավարման մագիստրոս, Մոսկվայի ձեռնարկատիրության միջազգային ակադեմիա
Հիմնական պաշտոն	Խորհրդի աուդիտի հանձնաժողովի անդամ
Քաղաքացիություն	Հաստատված Հանրապետություն
Այլ ընկերություններում ունեցած պաշտոններ, որոնք առնչվում են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ	«Միքսել» ՍՊԸ տնօրեն
Ընկերությունում բաժնետոմսերի ուղղակի տիրապետում	—
Փոխկապակցված ընկերություններում բաժնետոմսերի (բաժնեմասերի) ուղղակի տիրապետումը	«Միքսել» ՍՊԸ - (100%)

4.3. Խորհրդի նիստերը

2022թ. ընթացքում Ընկերության խորհուրդը գումարել է 10 նիստ:

Հեռակա քվեարկությամբ նիստեր չեն գումարվել:

2022թ. խորհրդի անդամների մասնակցությունը խորհրդի նիստերին ունի հետևյալ պատկերը՝

h/h	Պաշտոն և անուն	Նիստերին մասնակցությունը անձամբ	Նիստերին մասնակցությունը հեռակա կարգով	Նիստերի քանակը, որոնց պետք է մասնակցեր
	Նախագահ			
1	Հակոբյան Ռաֆայել Արմենի	10	0	10
	Անդամներ՝			
2	Հակոբյան Պարույր Հակոբի	10	0	10
3	Նավասարդյան Կարինե Արշավիրի	2	0	10
4	Վարդանյան Զորիկ Հովհաննեսի	10	0	10
5	Պողոսյան Գոռ Միերի	10	0	10
6	Բելլույան Միքայել Նորայրի	0	0	5
7	Առաքելյան Մարտին Հրաչյայի	5	0	5

Խորհուրդը չի ընդունել գնահատման քաղաքականություն, չի իրականացրել ինքնագնահատում, չի ներգրավել արտաքին գնահատողի:

Խորհրդի բոլոր անդամները Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են:

4.4. Խորհրդի հանձնաժողովները

Ընկերությունը խորհրդին կից ձևավորել է աուդիտի հանձնաժողով:

Խորհրդին կից աուդիտի հանձնաժողովը (այսուհետ՝ Աուդիտի հանձնաժողով) կազմված է բացառապես խորհրդի անդամներից: Աուդիտի հանձնաժողովի անդամներից երկուսը խորհրդի անկախ անդամ են, մեկը ոչ գործադիր:

Աուդիտի հանձնաժողովի նախագահին ընտրվել է խորհրդի կողմից, որը - խորհրդի անկախ անդամ է:

Աուդիտի հանձնաժողովի գործառույթները նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության խորհրդի կողմից հաստատված Աուդիտի հանձնաժողովի կանոնակարգով:

5. Գործադիր մարմին

- Ընկերության ընթացիկ ղեկավարումն իրականացնում է ընկերության գլխավոր տնօրենը:

Ընկերության գլխավոր տնօրենի իրավասությանն են պատկանում ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ ընկերության ընդհանուր ժողովի և խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը:

6. Ներքին աուդիտ

Ընկերության ներքին աուդիտ իրականացնող անձը նշանակվել է Ընկերության խորհրդի կողմից և անմիջական հաշվետու է խորհրդին, իսկ վարչական առումով՝ նաև գլխավոր տնօրենին:

Ընկերության ներքին աուդիտ իրականացնող անձն իր գործառույթները իրականացնում է համաձայն Ընկերության խորհրդի կողմից հաստատված ներքին աուդիտի գործունեության կանոնակարգի, որը սահմանում է ներքին աուդիտի կարգավիճակը, նրա գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև աուդիտի կողմից ներկայացվող հաշվետվությունների կազմման և ներկայացման կարգը և ժամկետները:

7. Կորպորատիվ քարտուղար

Կորպորատիվ քարտուղարի գործառույթները գործնականում իրականացնում է Ընկերության խորհրդի քարտուղարը, ով՝

- ապահովում է խորհրդի նիստերի հրավիրման՝ օրենքով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված կազմակերպչական ընթացակարգերը, այդ թվում՝ նիստերի հրավիրումը, անցկացումը և արձանագրումը,
- ապահովում է բաժնետերերի ընդհանուր և արտահերթ ժողովների գումարման մասին Ընկերության բաժնետերերին, Վերստուգող հանձնաժողովի անդամներին և աուդիտն իրականացնող անձին ծանուցումը, ժողովների անցկացման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների իրականացումը, տարեկան և արտահերթ ժողովներում բաժնետերերին ներկայացվելիք տեղեկությունների և նյութերի պատրաստումը, ժողովի կազմակերպումը և արձանագրումը,

- հանդես է գալիս որպես կապող օղակ (նաև ներդրողների հետ հարաբերությունների ոլորտում) և ապահովում է ՀՀ Կենտրոնական բանկի, բորսայի և դեպոզիտարիայի կանոններին հետևելը,
- աջակցում է խորհրդի նախագահին կորպորատիվ կառավարման ոլորտի ՀՀ օրենսդրության, Ընկերության կանոնադրության պահանջներին հետևելու հարցում:

8. Արտաքին աուդիտ

Սկսած 2005թ. Ընկերության արտաքին աուդիտը իրականացնում է «ԹՄ Աուդիտ» փակ բաժնետիրական ընկերությունը: «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ գտնվելու վայրն է՝

ք. Երևան, 0014 Սևակի 8:

հեռ.՝ (+374 60) 60 70 80, 60 71 81, info@tmaudit.am, www.tmaudit.am

Ընկերության ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները և աուդիտն իրականացնող անձի ընտրության համար մրցույթի իրականացման կանոնակարգը հաստատված է խորհրդի կողմից 10.05.2011թ.:

9. Տարեկան հաշվետվություն

Ընկերության տարեկան հաշվետվությունը ներկայացվում և հաստատվում է բաժնետերերի ընդհանուր ժողովում:

Ընկերության տարեկան հաշվետվությունը պարունակում է Կանոնագրքի 23-րդ հոդվածով նախատեսված ամբողջ տեղեկությունները և տեղադրվում է Ընկերության www.arpa-sevan.am ինտերնետային կայքի ներդրողի համար բաժնում:

Խորհրդի նախագահ՝

Ռաֆայել Հակոբյան



Գլխավոր տնօրեն՝

Պարույր Հակոբյան

Կատարող՝ Զորիկ Վարդանյան
(012) 21-11-11 (138)

**Հավելված 2. Կորպորատիվ Կառավարման Հայտարարագիր -
«Հետևիր կամ բացատրիր»**

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրը հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի (ԲԸԺ) իրավասությունները և բաժնետերերի իրավունքները			
1.	Ընկերության կանոնադրությունը նախատեսում է հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում հաղորդակցվել ԲԸԺ-ից առաջ և քննարկել քվեարկության հարցերը:	Ոչ	Ներկայումս Ընկերության կանոնադրությունը հստակ ընթացակարգեր չի պարունակում, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում հաղորդակցվել ԲԸԺ-ից առաջ և քննարկել քվեարկության հարցերը, սակայն նրանք փաստացի հնարավորություն ունեն քննարկել ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին տրամադրվող և ժողովին վերաբերվող տեղեկությունները և նյութերը: Բաժնետերերի հետ հաղորդակցման հարցերով պատասխանատու անձ է խորհրդի քարտուղարը:
2.	ԸԺ-ի օրակարգը և համապատասխան այլ փաստաթղթերը բաժնետերերը ստացել են ԲԸԺ-ից առնվազն 21 օր առաջ:	Այո	
3.	ԲԸԺ-ի օրակարգը ներառում է քվեարկության դրվելիք հարցերի վերաբերյալ որոշումների նախագծերը, ինչպես նաև խորհրդի կողմից ԲԸԺ-ի հաստատմանը ներկայացված աուդիտի իրականացնող անձի անունը:	Այո	
4.	Ընկերության կանոնադրությունը սահմանում է հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում քվեարկել հեռակա	Ոչ	Ընկերության բաժնետերը ընդհանուր ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել լիազորված ներկայացուցչի միջոցով՝ լիազորագրի առկայության դեպքում:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	կարգով (օրինակ էլեկտրոնային քվեարկությամբ):		
5.	Ընկերության կանոնադրությունը սահմանում է հստակ ընթացակարգեր, որոնք բաժնետերերին հնարավորություն են ընձեռում նշանակել ներկայացուցիչ:	Այո	
6.	Արդյոք բաժնետերերը ԲԸԺ-ում քվեարկում են քվեաթերթիկների միջոցով: (Այս կարգը կարող է չգործել միայն մեկ բաժնետեր ունեցող ընկերությունների դեպքում):	Այո	
7.	Արդյոք բաժնետերերը իրավունք ունեն հարցեր տալու ժողովի գումարումից մինչև 10 օր առաջ:	Այո	
8.	Արդյոք Խորհուրդը ժողովի ժամանակ պատասխանել է բաժնետերերի հարցերին:	Այո	
9.	Արդյոք բաժնետերերը իրավունք ունեն հարցեր տալու ժողովի ժամանակ:	Այո	
10.	Արդյոք Խորհուրդը պատասխանել է առաջադրված բոլոր հարցերին:	Այո	
Շահութաբաժինների վճարման քաղաքականությունը			
11.	Ընկերությունը ունի շահութաբաժինների վճարման քաղաքականություն, որը մշակվել է Խորհուրդի կողմից, հաստատվել է ԲԸԺ-ում և հրապարակվել է Ընկերության ինտերնետային կայքում:	Այո	
12.	Շահութաբաժինների վճարման քաղաքականությունը ներառում է վճարվելիք շահութաբաժնի նվազագույն գործակիցը (payout ratio):	Այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
Խորհուրդը			
13.	Ընկերությունը հիմնադրել է հստակ պարտականություններով և գործառույթներով օժտված խորհուրդ, որի մասին հրապարակված է ընկերության ինտերնետային կայքում:	Այո	
14.	Արդյոք Խորհուրդը կազմում է հաշվետվություն Կանոնագրքի դրույթներին Ընկերության հետևելու վերաբերյալ:	Այո	
15.	Արդյոք Խորհուրդը նշանակում և ազատում է գործադիր մարմնի ղեկավարին, ինչպես նաև ձևավորում է կոլեգիալ գործադիր մարմին (այդպիսին նախատեսված լինելու դեպքում), նշանակում և ազատում դրա անդամներին:	Այո	
16.	Արդյոք Խորհրդում ոչ գործադիր անդամները կազմում են մեծամասնություն, և արդյոք նրանցից առնվազն երկուսը անկախ են:	Այո	
17.	Խորհրդի հանձնաժողովները տարեկան մեկ անգամ անցկացնում են Ընկերության ներքին կորպորատիվ փաստաթղթերի (կանոնադրություն, կանոնակարգեր և այլ)՝ իրենց իրավասության ոլորտին վերաբերվող դրույթների փորձաքննություն և համապատասխան փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ են ներկայացնում խորհրդին:	Ոչ	Խորհուրդը, բացի աուդիտի հանձնաժողովից, այլ հանձնաժողովներ չունի: Աուդիտի հանձնաժողովը գտնվում է կայացման փուլում և դեռևս Ընկերության ներքին կորպորատիվ փաստաթղթերի վերաբերվող դրույթների փորձաքննություն չի իրականացրել:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
18.	Խորհրդի հանձնաժողովները պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն են ներկայացնում խորհրդին: Հանձնաժողովները այդպիսի հաշվետվություն են ներկայացնում յուրաքանչյուր նիստից հետո՝ պատեի ժամկետում: Հանձնաժողովների նիստերը պետք է նախորդեն Խորհրդի հերթական նիստերին:	Ոչ	Խորհրդի աուդիտի հանձնաժողովը գտնվում է կայացման փուլում և եռամսյակային պարբերականությամբ նիստեր չի անցկացնում: Հետևաբար խորհրդին համապատասխան հաշվետվություններ չի ներկայացնում:
19.	Խորհրդի հանձնաժողովների անդամները պետք է մասնակցեն հանձնաժողովի գործունեությանը և աշխատանքներին և ներկա գտնվեն բոլոր նիստերին:	Ոչ	Տես 17 կետի մեկնաբանությունը
Խորհրդի անդամների նշանակումը			
20.	Խորհրդի անդամների թեկնածությունների առաջադրումը ԲԸԺ-ին զուգակցված է առաջադրված թեկնածուի պաշտոնի նկարագրով և համառոտ կենսագրականով, որտեղ շարադրված են ստանձնելիք պարտականությունները, գործառույթները և կենսագրական տվյալները:	Ոչ	ԲԸԺ-ին ներկայացվում է առաջադրված թեկնածուի համառոտ կենսագրականը: Խորհրդի յուրաքանչյուր անդամի պաշտոնի նկարագիրը, պարտականությունները և գործառույթները փաստաթղթավորված չեն, բացառությամբ Խորհրդի նախագահի: Ընկերության խորհրդի գործունեության կանոնակարգը սահմանում է խորհրդի անդամների իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության ընդհանուր շրջանակը:
21.	Խորհրդի անդամների առաջադրված թեկնածուների պաշտոնի նկարագիրը և համառոտ կենսագրականները հրապարակվել են Ընկերության ինտերնետային կայքում՝ ԲԸԺ-ից առնվազն 30 օր առաջ:	Ոչ	Խորհրդի անդամների պաշտոնի նկարագրերը սահմանելուց հետո Ընկերությունը դրանք կհրապարակի իր ինտերնետային կայքում: ԲԸԺ-ից առնվազն 30 օր առաջ Ընկերությունը իր ինտերնետային կայքում հրապարակում է խորհրդի անդամների

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
			թեկնածուների համառոտ կենսագրականները:
Խորհուրդ. Գործունեության մոնիթորինգ			
22.	Խորհուրդը, համաձայն գնահատման քաղաքականության, դիտարկում է գործադիր մարմնի գործունեությունը:	Ոչ	Ընկերությունը չի մշակել գործադիր մարմնի գործունեության գնահատման քաղաքականություն:
23.	Խորհուրդն իրականացնում է իր գործունեության արդյունավետության տարեկան գնահատում՝ համաձայն հաստատված գնահատման քաղաքականության:	Ոչ	Խորհուրդը չի մշակել իր գործունեության արդյունավետության գնահատման քաղաքականություն:
Խորհրդի նիստերի հաճախելիությունը			
24.	Խորհրդի նիստերին խորհրդի անդամների մասնակցության մասին տվյալները ներառնված են ԿԿ Հայտարարագրի նկարագրական մասում և/կամ ընկերության տարեկան հաշվետվությունում:	Այո	
Խորհրդի անդամների վերաբերյալ տվյալները			
25.	Ինչպես պահանջվում է Կանոնագրքով, տարեկան հաշվետվությունը և/կամ ԿԿ հայտարարագրի նկարագրական մասը մանրամասն տեղեկություններ է պարունակում խորհրդի անդամների մասին:	Այո	
Խորհրդի նիստերի տարեկան պլանը			
26.	Ցուցակված ընկերությունների խորհրդի նիստերը պետք է հրավիրվեն նվազագույնը եռամսյակը մեկ անգամ:	Այո	
27.	Խորհրդի նիստերը գումարվում են համաձայն հաստատված տարեկան պլանի: Խորհրդի նիստերի օրակարգը և դրան ուղեկցող փաստաթղթերը	Ոչ	Նիստերի օրակարգը և դրան ուղեկցող փաստաթղթերը Խորհրդի անդամներին նիստի օրվանից առնվազն 10 օր առաջ չեն ուղարկվում: Նախատեսվում է հետագայում մշակել Խորհրդի նիստերի

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	Խորհրդի անդամներին է ուղարկվում նիստի օրվանից առնվազն 10 օր առաջ:		տարեկան պլան, ինչպես նաև խորհրդի գործունեության կանոնակարգում սահմանել փաստաթղթերը խորհրդին ներակայցնելու ժամկետները:
Խորհրդի նախագահը			
28.	Խորհրդի նախագահի և գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնները չեն համատեղվում:	Այո	
29.	Ընկերության կանոնադրությամբ հստակ տարանջատված են խորհրդի նախագահի և գլխավոր գործադիր տնօրենի իրավասությունները:	Այո	
30.	Խորհրդի նախագահը պատասխանատու է, որպեսզի խորհրդի նորընտիր անդամները իրենց պաշտոնավարման սկզբում պատշաճ ծանուցվեն ընկերության և իրենց պարտականությունների մասին: Ընկերությունն ունի խորհրդի անդամների համար նախատեսված ուսուցման ծրագրեր:	Ոչ	Այս հարցերի լուծումները կքննարկվեն խորհրդի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի վերանայման ընթացքում:
Խորհրդի անդամների գործունեության վնասների ապահովագրումը և նրանց ազատումը պատասխանատվությունից			
31.	Ընկերության կանոնադրությունը դրույթներ է պարունակում խորհրդի անդամներին այն վնասների փոխհատուցումից ազատելու վերաբերյալ, որոնք վրա են հասել նրանց պաշտոնական պարտականությունների իրականացման հետևանքով: Ընկերությունը ապահովագրվել է խորհրդի անդամների գործունեության վնասների դիսկից:	Ոչ	Ընկերության կանոնադրությամբ խորհրդի անդամներին վնասների փոխհատուցումից ազատելու վերաբերյալ դրույթներ նախատեսված չեն: Ապահովագրություն առայժմ չենք նախատեսում ֆինանսական նկատառումներից ելնելով:
Աուդիտի հանձնաժողով			

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
32.	Ընկերությունները պարտավոր են ստեղծել խորհրդի ոչ-գործադիր անդամներից բաղկացած աուդիտի հանձնաժողով, որտեղ մեծամասնությունը, ինչպես նաև հանձնաժողովի նախագահը պետք է լինեն անկախ:	Այո	
33.	Աուդիտի հանձնաժողովի բոլոր անդամները համապատասխան որակավորում ունեն ֆինանսների, հաշվապահության, աուդիտի և ներքին հսկողության հարցերում:	Ոչ	
34.	Աուդիտի հանձնաժողովը հետևում է ընկերության ֆինանսական հաշվետվությունների ամբողջականությանը և ընկերության ֆինանսական գործունեությանը վերաբերվող հայտարարություններին՝ դիտարկելով դրանցում տեղ գտած կարևոր պնդումները ֆինանսական հաշվետվողականության վերաբերյալ, վերանայում եռամսյակային և տարեկան հաշվետվությունները և Խորհրդին ու ԲԸԺ-ին առաջարկություններ կայացնում դրանց հաստատման վերաբերյալ:	Ոչ	Ընկերությունը ունի խորհրդի կողմից հաստատված աուդիտի հանձնաժողովի գործունեության կանոնակարգ: Աուդիտի հանձնաժողովը գտնվում է կայացման փուլում, և դրա անդամները չունեն Ընկերության աուդիտի հանձնաժողովի կանոնակարգի դրույթներով նախատեսված գործառույթների իրականացմանը համապատասխանող որակավորում, մասնավորապես՝ տնտեսագիտության, ֆինանսների և հաշվապահական հաշվետվությունների ամբողջականության ուսումնասիրության, վերլուծության և դրանք՝ ԲԸԺ-ի ընդհանուր ժողովի քննարկմանը և վերջնական հաստատմանը ներկայացնելու համար:
35.	Աուդիտի հանձնաժողովը նվազագույնը տարեկան մեկ անգամ հանդիպում է արտաքին աուդիտի իրականացնող անձին՝ քննարկելու աուդիտի հետ կապված հարցերը:	Ոչ	Տես 34 կետի մեկնաբանությունը
36.	Աուդիտի հանձնաժողովը պատասխանատու է վերանայելու ընկերության ներքին	Ոչ	Տես 34 կետի մեկնաբանությունը

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	վերահսկողության, ներքին աուդիտի, ինչպես նաև ռիսկերի կառավարման համակարգերը:		
37.	Աուդիտի հանձնաժողովը պատասխանատու է արտաքին աուդիտն իրականացնող անձի ընտրության, նրա աշխատանքի պայմանների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել խորհրդին, դրանք՝ ԲԸԺ-ի ընդհանուր ժողովի քննարկմանը և վերջնական հաստատմանը ներկայացնելու համար:	Ոչ	Աուդիտի հանձնաժողովը գտնվում է կայացման փուլում:
38.	Աուդիտի հանձնաժողովը մշակել է արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախության չափորոշիչներ:	Ոչ	Աուդիտի հանձնաժողովը գտնվում է կայացման փուլում:
39.	Աուդիտի հանձնաժողովը, դիտարկել է արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախությունը՝ համաձայն հաստատված չափորոշիչների, և արդյունքները ներառնվել են տարեկան հաշվետվությունում:	Ոչ	Աուդիտի հանձնաժողովը գտնվում է կայացման փուլում:
40.	Աուդիտի հանձնաժողովը պահում է իր նիստերի արձանագրությունները:	Ոչ	Աուդիտի հանձնաժողովը գտնվում է կայացման փուլում:
Ներքին աուդիտ			
41.	Ներքին աուդիտն իրականացնող անձը նշանակվում և ազատվում է Աուդիտի հանձնաժողովի համաձայնությամբ:	Այո	
42.	Ներքին աուդիտն իրականացնող անձը անմիջականորեն հաշվետու է Աուդիտի հանձնաժողովին:	Ոչ	Ներքին աուդիտն իրականացնող անձը անմիջականորեն հաշվետու է խորհրդին, այդ թվում՝ Աուդիտի հանձնաժողովին, իսկ վարչական առումով՝ նաև գլխավոր տնօրենին:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
43.	Ներքին աուդիտն իրականացնող անձը իր գործունեությունն իրականացնում է համաձայն Աուդիտի հանձնաժողովի կողմից հաստատված տարեկան պլանի և այդ մասին պարբերաբար զեկուցում է Աուդիտի հանձնաժողովին:	Ոչ	Ներքին աուդիտն իրականացնող անձը իր գործունեությունն իրականացնում է համաձայն խորհրդի կողմից հաստատված տարեկան պլանի և այդ մասին հաշվետվություն է ներկայացնում խորհրդին, այդ թվում՝ Աուդիտի հանձնաժողովին:
44.	Ներքին աուդիտն իրականացնող անձը պատասխանատու է ներքին հսկողության լիարժեքության դիտարկման և ներքին հսկողության ընթացակարգերի իրականացման համար	Այո	
Արտաքին աուդիտ			
45.	Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձը չպետք է մատուցի Կանոնագրքի 28-րդ կետի 2) ենթակետի ոչ-աուդիտորական ծառայությունները:	Այո	
46.	Արտաքին աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափը բացահայտվել և հաստատվել է ԲԸԺ-ում:	Ոչ	Համաձայն Ընկերության կանոնադրության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը հաստատում է ժողովը, վարձատրության չափը որոշում է խորհուրդը:
47.	Ընկերությունը ունի արտաքին աուդիտն իրականացնող անձի ռոտացիայի քաղաքականություն:	Ոչ	
Խորհրդի այլ հանձնաժողովները			
48.	Ընկերությունը ստեղծել է Խորհրդի անդամներից բաղկացած այլ հանձնաժողովներ	Ոչ	Խորհրդին կից այլ հանձնաժողովներ դեռևս չեն ձևավորվել, քանի որ Ընկերության զարգացման ներկա փուլում դրանց տնտեսական անհրաժեշտությունը չկա:
49.	Խորհրդի բոլոր հանձնաժողովները գործում են համաձայն իրենց կանոնակարգերի, որտեղ	Ոչ	Տես 48 կետի մեկնաբանությունը:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	սահմանվում են դրանց գործառույթները, դերն ու պարտականությունները:		
50.	Խորհրդի հանձնաժողովները պարբերաբար, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն են ներկայացնում խորհրդին: Հանձնաժողովները այդպիսի հաշվետվություն են ներկայացնում յուրաքանչյուր նիստից հետո՝ պատեի ժամկետում: Հանձնաժողովների նիստերը պետք է նախորդեն Խորհրդի հերթական նիստերին:	Ոչ	Տես 48 կետի մեկնաբանությունը:
51.	Խորհրդի հանձնաժողովների անդամները պետք է մասնակցեն հանձնաժողովի գործունեությանը և աշխատանքներին և ներկա գտնվեն բոլոր նիստերին:	Ոչ	Տես 48 կետի մեկնաբանությունը:
Կորպորատիվ քարտուղար			
52.	Ընկերության խորհուրդը նշանակել է կորպորատիվ քարտուղար, որը հաշվետու է խորհրդին: Կորպորատիվ քարտուղարը աջակցում է խորհրդի նիստերի կազմակերպմանը, մասնավորապես նիստերի պլանավորմանը, հրավիրմանը, անցկացմանը և արձանագրության վարմանը՝ համաձայն օրենքների և ընկերության ընթացակարգերի: Խորհուրդը սահմանում է կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագիրը, ինչպես նաև նրա վարձատրության չափը:	Ոչ	Ընկերության կորպորատիվ քարտուղարի գործառույթները ի իրականացնում է Ընկերության խորհրդի քարտուղարը:
53.	Կորպորատիվ քարտուղարը աջակցում է Խորհրդի	Այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագրի քի հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	Նախագահին՝ դիտարկելու կորպորատիվ կառավարման ոլորտի ՀՀ օրենսդրության, Կանոնագրի, Ընկերության կանոնադրության և կանոնակարգերի պահանջները Ընկերության կողմից կատարելը:		
Տեղեկատվության բացահայտումը և թափանցիկությունը			
Տարեկան հաշվետվություն			
54.	Ընկերությունը կազմել է հաշվետու տարվա տարեկան հաշվետվությունը, որը ներկայացվել է բաժնետերերի հաստատմանը և հրապարակվել է ընկերության ինտերնետային կայքում:	Այո	
55.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է ֆինանսական հաշվետվություն՝ կազմված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:	Այո	
56.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է Ընկերության շահառուներին հասցեագրված տեղեկատվությունը, որը հնարավորություն է տալիս գնահատել ընկերության ներդրումը տնտեսական կայունության, սոցիալական բարեկեցության և բնապահպանական անվտանգության ապահովման գործում:	Այո	
57.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է տեղեկություն Ընկերության վարքագծի կանոնների վերաբերյալ և հղում ընկերության ինտերնետային	Այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրը հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	կայքին, որտեղ այն տեղադրված է:		
58.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է ԿԿ Հայտարարագիրը Կանոնագրքին հետևելու և/կամ մանրամասն բացատրությունը՝ չհետևելու և դրա պատճառների մասին	Այո	
59.	Տարեկան հաշվետվությունը պարունակում է տեղեկություններ Ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ կնքված մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքների մասին, որոնց արժեքը գերազանցում է Ընկերության ակտիվների արժեքի 2 տոկոսը՝ մանրամասն ներկայացնելով այդպիսի գործարքների հաստատման կամ վավերացման համար Ընկերության կողմից ընդունված քաղաքականությունը և ընթացակարգերը: Ընկերության և փոխկապակցված անձանց միջև փոխկապակցված այդպիսի գործարքների առկայության դեպքում նաև պետք է ներկայացնել Ընկերության գործարքներում փոխկապակցված անձանց գործարքների համամասնությունը, փոխկապակցված անձանց յուրաքանչյուր խմբի գործարքները, փոխկապակցված անձանց գործարքների պայմանների արդարության գնահատումը: Ընկերության և փոխկապակցված անձանց միջև այդպիսի գործարքների	Ոչ	Այդպիսի գործարքների կնքումը կատարվում է ՀՀ օրենսդրության և Ընկերության կանոնադրության շրջանակներում, իսկ համապատասխան տեղեկությունները բացահայտվում են Ընկերության տարեկան հաշվետվությունում, «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ և ՀՀ Կենտրոնական բանկին ներկայացված հաշվետու թողարկողի հաշվետվություններում:

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	բացակայության դեպքում պետք է հստակ նշվի այդ մասին:		
60.	Տարեկան հաշվետվությունը ներառում է արտաքին աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը:	Այո	
61.	Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության նշանակալից (10%-ից ավելի) բաժնետոմսերին ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետող բաժնետերերի ցուցակը:	Այո	
62.	Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության փոխկապակցված անձանց ցուցակը և փոխկապակցված անձանց հետ կնքված այն գործարքների ցանկը, որոնց արժեքը գերազանցում է Ընկերության ակտիվների արժեքի 2 տոկոսը:	Այո	
63.	Տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի անդամների, այդ թվում անկախ անդամների անունները և հակիրճ կենսագրությունը, այդ թվում տարվա ընթացքում հրաժարական տված և պաշտոնից հեռացված խորհրդի անդամների անունները, տարվա ընթացքում խորհրդի անդամի պաշտոն զբաղեցրած բոլոր անձանց վարձատրության վերաբերյալ տվյալները, ինչպես նաև խորհրդի նիստերին նրանց մասնակցության վերաբերյալ տվյալները:	Ոչ	Ընկերությունը չի հրապարակում խորհրդի անդամների վարձատրության վերաբերյալ տվյալներ, քանի որ խորհրդի անդամները չեն վարձատրվում:
64.	Տարեկան հաշվետվությունը ներառում է արտաքին աուդիտն իրականացնող անձանց անունը և	Այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
	վարձատրությունը, ինչպես նաև նրանց անկախության փաստի ստուգման արդյունքները:		
65.	Տարեկան հաշվետվությունը ներառում է Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի նկարագրությունը, այդ թվում՝ դուստր ընկերությունների, մասնաճյուղերի, մայր ընկերության, ինչպես նաև քվեարկելու իրավունք տվող բաժնետոմսերի խաչաձև տնօրինումը փոխկապակցված այլ ընկերությունների հետ:	Այո	
66.	Տարեկան հաշվետվությունը ներառում է Տնօրենի ամփոփիչ հաշվետվությունը նախորդ տարվա գործունեության վերաբերյալ, ռիսկային գործոնները, գալիք տարվա հեռանկարները, ընկերության ռազմավարությունը, տարվա ընթացում կնքված խոշոր գործարքները, ձեռնարկատիրական գործունեության հետ կապված գլխավոր փոփոխությունները, բացատրություն նախորդ տարվա ցուցանիշների հետ համեմատած ֆինանսական արդյունքների կարևոր փոփոխությունների վերաբերյալ, շահույթի տեղաբաշխման և բաշխման, այդ թվում շահութաբաժինների վճարման առաջարկությունները:	Այո	
67.	Տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի անդամների, ինչպես ղեկավարի և գլխավոր հաշվապահի վարձատրությունը:	Ոչ	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
68.	Տարեկան հաշվետվությունը ներառում է թողարկված բաժնետոմսերի քանակը և դասը կամ դասերը, և արժեթղթերի համապատասխան դասին տիրապետող բաժնետերերի իրավունքների ամփոփումը:	Այո	
Ընկերության ինտերնետային կայքը			
69.	Ընկերությունն ունի ինտերնետային կայք, որտեղ առանձին բաժին նվիրված է կորպորատիվ կառավարմանը:	Այո	
70.	Ընկերության ինտերնետային կայքը պարունակում է վերջին 3 տարիների ԿԿ Հայտարարագրերը:	Այո	
71.	Ինտերնետային կայքը, կորպորատիվ կառավարման բաժինը և այնտեղ տեղադրված փաստաթղթերը հասանելի են նաև օտար լեզվով:	Այո	
72.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են ընկերության պետական գրանցման վկայականը և կանոնադրությունը՝ բոլոր գործող փոփոխություններով հանդերձ:	Այո	
73.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժինը տեղեկություններ է պարունակում խորհրդի անդամների և գործադիր մարմնի վերաբերյալ՝ ներառելով նրանց համառոտ կենսագրականները և պաշտոնի նկարագրերը:	Այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
74.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են խորհրդի, խորհրդի հանձնաժողովների Կանոնակարգերը և կորպորատիվ քարտուղարի պաշտոնի նկարագիրը:	Այո	
75.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է խորհրդի տարեկան գնահատման քաղաքականությունը:	Ոչ	
76.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված են նախորդ 5 տարիների ԲԸԺ-երի նիստերի արձանագրությունները:	Այո	
77.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է հաստատված շահութաբաժինների վճարման քաղաքականությունը:	Այո	
78.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է Ընկերության կառուցվածքը և բաժնետոմսերի խաչաձև տնօրինումը:	Այո	
79.	Ընկերության կայքի կորպորատիվ կառավարման բաժնում տեղադրված է Ընկերության նախորդ 3 տարիների տարեկան հաշվետվությունները:	Այո	
Վարքագծի կանոններ			
80.	Ընկերությունը ընդունել է վարքագծի կանոններ:	Այո	

	Կորպորատիվ կառավարման կանոնագիրք հիմնահարց	Այո/Ոչ	Մեկնաբանություններ/Բացատրություն
Շահառուներ			
81.	Ընկերությունը ընդունել է քաղաքականություն՝ միտված շահառուների շահերը և սպասելիքները հաշվի առնելուն:	Ոչ	
82.	Խորհուրդը մշակել և բացահայտել է շահառուների հետ հարաբերությունների հաստատման քաղաքականությունը և ընթացակարգերը և տարեկան կտրվածքով բացահայտում է դրանց իրականացումը:	Ոչ	
83.	Շահառուների համար հասանելի են ընկերության ինտերնետային կայքի՝ տարեկան հաշվետվություններին և կորպորատիվ կառավարմանը վերաբերվող բաժինները:	Այո	